Օրենսդրական փոփոխություններ

Մաքսային ստուգումների նոր պարզեցված կարգավորումներ

www.src.am

Կամերալ մաքսային ստուգումների հստակ ժամկետներ

Կամերալ մաքսային ստուգման ժամկետը չի կարող գերազանցել 40 աշխատանքային օրը: Միաժամանակ, ստուգման ենթակա անձը պարտադիր ծանուցվելու է ստուգման մեկնարկի մասին: Իսկ ստուգման ժամկետը չի կարող երկարաձգվել կամ կասեցվել:

Մաքսային փաստաթղթերի ծանուցման նոր կարգ

Մաքսային ստուգումների վերաբերյալ փաստաթղթերը տրամադրվելու են առձեռն, փոստով, էլեկտրոնային փոստով կամ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի միջոցով:

Նախկինում օրենքով սահմանված չէին էլեկտրոնային համակարգերով ծանուցման մեխանիզմներ, առկա չէին առանձին փաստաթղթերի մասով ծանուցման ընթացակարգեր:

Ստուգման ակտի նախագիծ և առարկությունների հնարավորություն

Մաքսային ստուգման ընթացքում խախտումներ հայտնաբերելու դեպքում ստուգման ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, կազմվելու է ստուգման ակտի նախագիծ, որը 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվելու է ստուգվող անձին: Այն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, դրա վերաբերյալ հնարավոր կլինի ներկայացնել առարկություններ, պարզաբանումներ:

Ստուգմանն առնչվող բոլոր որոշումները՝ մեկ փաստաթղթում

Մաքսային ստուգումների արդյունքների հիման վրա կայացվող որոշումների տեսակները հստակ սահմանվելու և ներառվելու են ստուգման ակտում:

Նախկինում նման որոշումները կարող էին կազմվել առանձին՝ ստուգման ակտից անկախ, ինչը բարդացնում էր ստուգման գործընթացը:

Կրկնվող անվտանգության պահանջների վերացում

Մաքսային գործի ոլորտում գործունեություն իրականացնող որոշ տնտեսվարողների համար (ժամանակավոր պահպանության, մաքսային, ազատ պահեստներ, անմաքս առևտրի խանութներ) վերացվելու են կրկնվող պահանջները: Նախկինում, միաժամանակ, պարտադիր էր, ինչպես պահնորդաազդանշանային անվտանգության համակարգերի ապահովումը, այնպես էլ՝ անվտանգության ծառայության առկայությունը, ինչը գործնականում կրկնում էր նույն պահանջը:

Պատասխանատվության նոր կարգավորումներ

Մաքսային ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների դեպքում կազմակերպությունների համար սահմանվելու է պատասխանատվություն՝ նախատեսելով տուգանք՝ չհաշվարկված կամ պակաս հաշվարկված պարտավորությունների 20 տոկոսի չափով, իսկ պայմանական բացթողնման պայմանների խախտման դեպքում՝ 50 տոկոսի չափով: Կվերանայվի նաև տույժերի դրույքաչափը՝ 0.04 տոկոսից բարձրանալով մինչև 0.075 տոկոս՝ ապահովելով համապատասխանեցում ՀՀ հարկային օրենսդրությանը:

Ֆիզիկական անձանց համար նախատեսվում է առանձին կարգավորում: